II

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

XX դարի հայ երաժշտագիտական մտքի զարգացման գործում մեծ է այնպիսի գործիչների դերը, ինչպիսիք էին Վասիլի Կորգանովը (Ղորղանյան), Քրիստափոր Քուշնարյանը, Օվսաննա Տեր-Գրիգորյանը, Մուշեղ Աղայանը, Ռուբեն Թերլեմեզյանը, Արշակ Ադամյանը, Գեորգի Տիգրանովը, Ալեքսանդր Շահվերդյանը և ուրիշներ, որոնց շարքում իր պատվավոր տեղն ունի Սպիրիդոն Մելիքյանը:

Անվանի կոմպոզիտոր, խմբավար, երաժշտագետ ու մանկավարժ, ԽՍՀՄ ԳԱ արվեստի ինստիտուտի իսկական անդամ (1928-ից), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1933-ից) Սպիրիդոն Ավետիսի Մելիքյանը ծնվել է 1880 թ. Վաղարշապատում: 1902 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որտեղ, ի թիվս այլ անվանի գործիչների, աշակերտել է նաև Կոմիտասին: Մինչև 1905 թ. դասավանդել է նույն ճեմարանում, եղել Կոմիտասի օգնական խմբավարը: Այդ տարիներին էլ արտագրել-կրկնօրինակել է Կոմիտասի գրառած բազմաթիվ ժողովրդական երգեր, որոնք հետագայում «Ազգագրական ժողովածու» ընդհանուր խորագրով հրատարակվեցին հենց իր ջանքերով[1]: 1904–1908 թթ. Ս. Մելիքյանն ուսանել է Բեռլինում՝ Ռ. Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում, որտեղ, ի դեպ, ժամանակին նաև Կոմիտասն էր սովորել:

Կոմիտասի առաջին աշակերտներից մեկը լինելով՝ դեռ ճեմարանական տարիներից հենց նրա ղեկավարությամբ էլ Մելիքյանը ձեռնարկել է հայ երաժշտության ուսումնասիրության իր առաջին քայլերը: Ճեմարանի նրա ավարտական հետազոտա-

---

[1] Կոմիտասի գրառումների՝ Ս. Մելիքյանի արտագրած-կրկնօրինակած նմուշները տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Երաժշտական բաժին, Սպիրիդոն Մելիքյանի ֆոնդ -109, նաև՝ Կոմիտաս. Ազգագրական ժողովածու, հ. 1, Երևան, 1931: 1930–1931 թթ. լինելով Երևանի պետկոնսերվատորիայի տնօրեն և ԽՍՀՄ ԳԱ արվեստի ինստիտուտի իսկական անդամ՝ Ս. Մելիքյանը կարողացավ կազմակերպել Կոմիտասի գրառած այդ երգերի ժողովածուի հրատարակման գործը, որն իր կրկնօրինակած ձեռագրերի հետ երկար ժամանակ բնագրային արժեք ուներ, քանի որ Կոմիտասի ձեռագիր գրառումները կորած էին համարվում: Դրանք հայտնաբերվեցին 1950-ական թվականներին Գերմանիայում և տեղափոխվեցին Հայաստան.– Սովետական Հայաստանի երաժշտությունը (հոդվածների ժողովածու), Երևան, 1973, էջ 540–541:

կան աշխատանքը նվիրված էր հայկական հնագույն երաժշտական նշանագրերի՝ խազերի ուսումնասիրությանը: Բեռլինում ուսանելիս էլ նա աշակերտել է այն նույն պրոֆեսորներին, ովքեր դասավանդել էին նաև Կոմիտասին, ու թվում էր, թե Մելիքյանը դառնալու է կոմիտասյան ավանդույթների հիմնական շարունակողներից մեկը մեր երաժշտագիտության մեջ: Սակայն կոնսերվատորիայում հիմնավոր երաժշտության տեսություն և երաժշտական մշակույթի պատմություն ուսումնասիրելուց հետո հայրենիք վերադարձած երաժշտագետն սկսեց խորամուխ լինել մեր հոգևոր տաղերի ծագումնաբանության ուսումնասիրության մեջ, համեմատեց դրանք աշխարհիկ, բանահյուսական ծագմամբ երգերի հետ՝ որոշ հարցերում Կոմիտասի տեսակետներին տրամագծորեն հակառակ եզրակացության գալով:

1908–1909 թթ. որպես երաժշտության ուսուցիչ դասավանդելով Շուշիի թեմական դպրոցում, ապա մանկավարժական գործունեությունը շարունակելով (մինչև 1921 թ.) Թիֆլիսի Ներսիսյան վարժարանում (այստեղ նրան 1909–1912 թթ. աշակերտել է նաև անվանի երգիչ Շարա Տալյանը)՝ Սպ. Մելիքյանը հնարավորություն ունեցավ զբաղվելու նաև գիտահետազոտական աշխատանքներով՝ գրառելով և ուսումնասիրելով 1000-ից ավելի հայկական ժողովրդական երգեր ու պարեղանակներ[2]: Հրաժարվելով էջմիածնում իրեն առաջարկվող հոգևոր կոչումներից՝ նա վճռեց նվիրվել երաժշտամանկավարժական գործունեությանը, զբաղվել երաժշտագիտական, խմբավարական և ստեղծագործական աշխատանքներով: Գիտական հետազոտությունների արդյունքում հրատարակեց արժեքավոր երաժշտագիտական հոդվածներ, գրքեր ու ժողովածուներ: 1909 թ. հրատարակված նրա «Երաժշտության զարգացման խնդիրները մեզանում» գրքույկը և 1912-ին հրատարակված «Դասագիրք երգեցողության» (Ա և Բ տարի) ուսումնական ձեռնարկը, փաստորեն, հայ երաժշտամանկավարժական գործը պրոֆեսիոնալ հիմքի վրա դնելու լուրջ փորձեր էին: «Երաժշտության զարգացման խնդիրները մեզանում» գրքույկում հեղինակը դատապարտում է դպրոցներում երաժշտության դասերին առավելապես հոգևոր տաղեր ու շարականներ սովորեցնելու՝ հնուց ի վեր արմատավորված ավանդույթը: Նա առաջարկում է կազմակերպել ֆիլհարմոնիկ ընկերություն, որը կզբաղվի երաժշտական ստեղծագործությունների հանրայնացման խնդիրներով և ճիշտ ուղով կտան երաժշտական ճաշակի ձևավորման ու զարգացման գործը[3]: Միանգամայն իրավացի համարելով Կոմիտասի այն տեսակետը, թե ազգային մելոսի մասին ճիշտ պատկե-

---

[2] *Ս. Մելիքյանի երաժշտական ու երաժշտագիտական գործունեության մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Թադևոսյան. Սպիրիդոն Մելիքյանը և հայ ժողովրդական երգը, Երևան, 1964, Մ. Մուրադյան. Հայ երաժշտական մշակույթի պատմության ձեռնարկ, գիրք 2-րդ, Երևան, 1970, էջ 575–578:*

[3] Տե՛ս Ս. Մելիքյան. Երաժշտության զարգացման խնդիրները մեզանում, Թիֆլիս, 1909, էջ 8–13, 30–33:

ռացում կարելի է կազմել հատկապես աշխարհիկ, ժողովրդական՝ բանահյուսական երգերն ուսումնասիրելով՝ Մելիքյանը, այնուամենայնիվ, պնդում է, որ մեծ են նաև օտար ազդեցությունները ոչ միայն հոգևոր, այլև նույնիսկ այդ աշխարհիկ, ժողովրդական երգերի վրա: Իր մեկ այլ՝ «Հունական ազդեցությունը հայ երաժշտության տեսականի վերայ» աշխատության «Երկու խոսք» վերնագրված առաջաբանում նա անդրադառնում է հատկապես հայ հոգևոր երաժշտության վրա հունական երգեցողության թողած ոճական ազդեցություններին և փորձում է հիմնավորել, որ V-ից մինչև XIX դարերը հայկական հոգևոր երաժշտության մեջ ի հայտ եկած շատ երևույթներ. «… մի տեսակ արտահայտություններ են հունական կյանքում պատահած երաժշտական շարժումների»[4]: Շատ հարցերում Կոմիտասի հետ տարակարծիք լինելով հանդերձ՝ Ս. Մելիքյանը մեծագույն հարգանքով էր վերաբերում իր ուսուցչին՝ անչափ բարձր գնահատելով նրա դերը հայ պրոֆեսիոնալ երաժշտության սկզբնավորման ու զարգացման գործում: Կոմիտասի մշակած երգերի ուսումնասիրությանը նվիրված իր մի լուրջ աշխատության մեջ, հանգամանորեն վերլուծելով այդ մշակումները, նա վերջում հետևյալ եզրահանգմանն է գալիս. «Կոմիտասը կարողացել է խորասուզվել շինականի տարերային հոգեբանության խորքերը և իր զգացմունքները միացրել նրա երգի հետ այնպիսի վարպետությամբ, որ այլևս անհնարին է գտնել, թե որտեղ է վերջանում մեկը, և որտեղ սկսվում մյուսը»[5]: 1927 թ. նոյեմբերի 13–16-ը Մոսկվայում՝ Հայկական կուլտուրայի տանը կազմակերպված Երևանի պետկոնսերվատորիայի երգչախմբի համերգի ծրագրում այդ երգչախմբի գեղարվեստական ղեկավար Ս. Մելիքյանը, անվանի այլ կոմպոզիտորների խմբերգերից զատ, նմուշներ էր ընդգրկել նաև Կոմիտասի, Քրիստափոր Կարա-Մուրզայի և Մակար Եկմալյանի խմբերգերից[6]:

Առհասարակ իր գիտական աշխատություններում ու հոդվածներում արտահայտած շատ տեսակետներ Ս. Մելիքյանը գործնականում կարող էր անտեսել: Բայց դա անհետևողականություն չէր, պարզապես նա որքան սկզբունքային, նույնքան էլ բարյացակամ ու անշահախնդիր մարդ էր: Հոդվածներում նա կարող էր չընդունել, օբյեկտիվորեն քննադատել այս կամ այն արվեստագետի տեսակետները, իսկ գործնական հարաբերություններում նրան վերաբերվել ընկերական ջերմ հարգանքով (օրինակ, Սովետական Հայաստանի երաժշտությունը (հոդվածների ժողովածու, էջ 546–549):

---

[4] Ս. Մելիքյան. Հունական ազդեցությունը հայ երաժշտության տեսականի վերայ, Թիֆլիս, 1914, էջ 6:

[5] Ս. Մելիքյան. Կոմիտասի ստեղծագործությունների անալիզը (Կոմիտասի ծննդյան 60-ամյակի առթիվ), Երևան, 1932, էջ 34:

[6] Համերգի ծրագիրը տե՛ս ԳԱԹ, Երաժշտական բաժին, Սպիրիդոն Մելիքյանի ֆոնդ, - 57:

Ս. Մելիքյանը ոչ միայն հրաշալի մանկավարժ, երաժշտագետ ու խմբավար էր, այլև մշակույթի եռանդուն գործիչ ու կազմակերպիչ: Նա մեծ խանդավառությամբ մասնակցում էր 1914 թ. իր և Ռոմանոս Մելիքյանի ջանքերով կազմակերպված Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության աշխատանքներին, 1917-ին էլ կազմակերպել էր Թիֆլիսի հայկական երգչախմբային ընկերությունը: 1921-ին տեղափոխվելով Երևան (1921-ի մայիսին կոմպոզիտոր Ազատ Մանուկյանի հետ նա Հայաստան հրավիրվեց՝ դպրոցների երաժշտության ուսուցման հրահանգիչ աշխատելու[7])՝ նա անմնացորդ նվիրումով մշակութային գործունեություն է ծավալում, մեծապես աջակցում հատկապես Ռ. Մելիքյանին՝ Երաժշտական ստուդիա ստեղծելու գործում, որն ավելի ուշ (1923-ին) վերանվանվեց և դարձավ Երևանի պետկոնսերվատորիա:

Մեծ էր, անշուշտ, Ս. Մելիքյանի ներդրումը հայ երաժշտական մտքի առաջընթացը կազմակերպելու հարցում: Ուշադրության են արժանի ոչ միայն նրա գրառած, ուսումնասիրած ու մշակած երգերն ու պարեղանակները, որոնք հրատարակվեցին «Շիրակի երգեր», «Վանա երգեր» և «Հայ ժողովրդական երգեր և պարեր» ժողովածուներում[8], այլև գիտական ուսումնասիրություններն ու աշխատությունները, որոնցից առավել արժեքավորը «Ուրվագիծ հայ երաժշտության պատմության»[9] ծավալուն աշխատությունն է:

Խորհրդային Հայաստանի իշխանությունները բարձր էին գնահատում Ս. Մելիքյանի վաստակը: Նա Երևանի պետկոնսերվատորիայի գեղարվեստական խորհրդի նախագահն էր, 1930–1931-ին՝ տնօրենը, 1928-ից ԽՍՀՄ ԳԱ արվեստի ինստիտուտի իսկական անդամ, 1933-ին նրան շնորհվեց ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչում: Հիրավի, լուրջ ու նվիրված մշակութային գործիչ էր Մելիքյանը, ոչ միայն մշակույթի իսկական արժեքը հասկացող ու գնահատող, այլև մշակույթի այլ գործիչներին ընկերական ջերմ հարգանքով վերաբերվող անձ: Դրա համար էլ, ինչպես ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղում, այնպես էլ Երևանի պետկոնսերվատորիայում նրա շուրջ աշխատանքային ու ստեղծագործական ջերմ մթնոլորտ էր ստեղծվել: Նա մեծ հեղինակություն էր հատկապես Պետկոնսերվատորիայում, որը՝ իբրև նորաստեղծ կրթամշակութային հաստատություն, կարևոր դեր ուներ երիտասարդության գեղագիտական դաստիարակության գործում: Երբ Ղրիմից 1924 թ. Երևան տեղափոխվեց մեծանուն կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը, Ս. Մելիքյանն անչափ կարևորեց վերջինիս ներկայությունը Հայաստանի դեռ նոր ձևավորվող մշակութային կյանքում[10]: Ալ. Սպենդիարյանին նա վաղուց էր ճանաչում. ծանոթացել էր

---

[7] *Տե՛ս ԳԱԹ, Երաժշտական բաժին, Սպիրիդոն Մելիքյանի ֆոնդ, - 57:*

[8] *Տե՛ս Ս. Մելիքյան. Շիրակի երգեր, Թիֆլիս, 1917, նույնի՝ Վանա երգեր, Երևան, 1927, նույնի՝ Հայ ժողովրդական երգեր և պարեր, հ. 1, Երևան, 1949, հ. 2, Երևան, 1953:*

[9] *Տե՛ս Ս. Մելիքյան. Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Երևան, 1935:*

[10] *Տե՛ս Մ. Սպենդիարով. Սպենդիարով, Երևան, 1966, էջ 164–168:*

Թիֆլիսում 1916 թ., երբ Սպենդիարյանը եկել էր Հովհ. Թումանյանի հետ հանդիպելու և նրա երկերում իր ապագա օպերայի համար թեմա փնտրելու նպատակով: Տեղեկանալով, որ Մելիքյանը ֆոնոգրաֆով ձայնագրել է Շիրակի երգերի մի փունջ՝ դրանք նոտագրելու, ամբողջական ժողովածուով հրատարակելու նպատակով, Սպենդիարյանն այցելեց նրանց տուն: Ինչպես հետագայում հիշում էր Սաթիկ Մելիքյանը՝ Ս. Մելիքյանի քույրը, մեծանուն կոմպոզիտորն անմիջապես նստել էր ֆոնոգրաֆի մոտ, դրել ականջակալներն ու մեծ ոգևորությամբ ունկնդրել հայրենի մեղեդիները: Երբ առաջարկել էին օգտվել տանտիրուհու հյուրասիրությունից, թեյ խմել, նա խնդրել էր թույլ տալ իրեն նախ երգերը լսել[11]: Հետագայում Մելիքյանի գրառած Շիրակի երգերից որոշ նմուշներ Սպենդիարյանն օգտագործեց «Ալմաստ» օպերայում՝ Թաթուլի հաղթական վերադարձի քայլերգը գրելիս: Երկու կոմպոզիտորների մտերմությունը շարունակվեց Երևանում: Մելիքյանի առաջարկով՝ ստեղծագործական գործունեության 25-ամյակի առթիվ Պետկոնսերվատորիայի մանկավարժական խորհուրդը Սպենդիարյանին Երևանի պետկոնսերվատորիայի նվագախմբային բաժնի պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհեց[12]: Յավոք, 1928 թ. կյանքից վաղաժամ հեռացավ Սպենդիարյանը: Նրա մահվան առթիվ Ս. Մելիքյանի գրած հիշատակի խոսքն անվանի կոմպոզիտորի տաղանդի ու վաստակի արժանի գնահատականը դարձավ: «Ալ. Աֆ. Սպենդիարյանը մեր կոնսերվատորիայում» վերնագրված իր հիշատակի խոսքում, որը հետագայում որպես ջերմ հուշ հրատարակվեց տարբեր ժողովածուներում[13], Մելիքյանն առավելապես կարևորում է Սպենդիարյանի դերը ոչ միայն Պետկոնսերվատորիայում սիմֆոնիկ նվագախումբ կազմակերպելու, այլև առհասարակ հայկական սիմֆոնիկ երաժշտության ստեղծման ու զարգացման գործում: Ահա թե ինչ է գրում նա այդ մասին. «Չլիներ Ալ. Աֆանասևիչի անհատորեն ոգևորող մասնակցությունը, չլինեին Ալ. Աֆանասևիչի՝ արևելքը բուրող մեկը մյուսից գեղեցիկ ու աննման ստեղծագործությունները, որոնք մեր սիմֆոնիկ օրկեստրի ռեպերտուարում ամենամեծ տեղն էին բռնում, մեր օրկեստրը երբեք այն բարձրությանը չէր հասնի, որի վրա այժմ նա գտնվում է, երբեք չէր կարող իր շուրջը ստեղծել այն հմայքը, որ իրոք այսօր նա վայելում է մեր իրականության մեջ, որովհետև վերջ ի վերջո այդ եվրոպական գործիքները արևելյան ընտանի ու ընդունելի

---

[11] *Ս. Մելիքյանի հուշերը տե՛ս «Սովետական արվեստ», 1971, - 10, էջ 16:*

[12] *Տե՛ս Ռ. Հովհ(աննիսյան). Կոմպոզիտոր Սպենդիարյանի հոբելյանական համերգը.– «Խորհրդային Հայաստան», 5. X. 1926,* М. Спендиарова. Летопись жизни и творчества А. А. Спендиарова. Ереван, 1975, с. 443–444, 452.

[13] *Ս. Մելիքյան. Հոդվածներ, հուշեր, նամակներ, փաստաթղթեր (կազմ. Սաթիկ Մելիքյան և Ալեքսանդր Թադևոսյան), Երևան, 1964, էջ 38, Հուշեր (Սպենդիարյանի ժամանակակիցների հուշերը նրա մասին՝ հրատարակված կոմպոզիտորի ծննդյան 140-ամյակի առթիվ: Կազմ. Մարինե Օթարյան և Տիգրան Սարգսյան), Երևան, 2012, էջ 63:*

դարձնելու համար երբեք Մոցարտն ու Բեթհովենը այն չէին կարող անել, ինչ որ արավ Ալ. Աֆ. Սպենդիարյանը իր արևելյան հարազատ ստեղծագործություններով»[14]*:*

Յավոք, Ս. Մելիքյանին վիճակված չէր ապրել մինչև խոր ծերություն: Նա վախճանվեց 1933 թվականին՝ թողնելով ոչ միայն ժողովրդական երգերի ու պարերգանակների արժեքավոր ու ինքնատիպ մշակումներ («Թխկոնդա», «Պիլիբի», «Ծամթել» և այլ երգեր), հետաքրքիր և ուշագրավ երաժշտական ստեղծագործություններ («Գառնիկ ախպեր» մանկական օպերա, «Սխթամար» երկը՝ երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար, երգեր ու ռոմանսներ), այլև երաժշտագիտական լուրջ ուսումնասիրություններ և ուսուցողական ձեռնարկներ:

РОЛЬ СПИРИДОНА МЕЛИКЯНА В АРМЯНСКОЙ МУЗЫКАЛЬНОЙ КУЛЬТУРЕ

ТИГРАН САРКИСЯН

Резюме

В развитии армянской музыкальной культуры XX века огромную роль сыграл Спиридон Меликян. Он родился в 1880 г. в Вагаршапате. В 1902 г. окончил Геворкянскую духовную семинарию в Эчмиадзине, где был учеником Комитаса. До 1905 г. Меликян преподавал в той же духовной семинарии, был ассистентом дирижера у Комитаса. С 1904 до 1908 г. он учился в Берлине, в частной консерватории Р. Шмидта, где когда-то учился и Комитас. Казалось бы, что как музыковед Меликян продолжит традиции Комитаса. Но, изучив в консерватории теорию музыки и историю музыкальной культуры и вернувшись на родину, он начал изучать армянскую духовную музыку и музыкальный фольклор и по некоторым вопросам пришел к совершенно противоположным с Комитасом выводам. Несмотря на это, Меликян относился к своему учителю с огромным уважением. В 1930–31 гг., будучи директором Ереванской Госконсерватории и настоящим членом института Искусства АН СССР (с 1928 г.), Меликян организовал публикацию сборника народных песен, записанных Комитасом. С. Меликян был не только хорошим композитором и серьезным музыковедом, но и успешным организатором и педагогом. В 1921 г. он в качестве музыканта-педагога был приглашен на работу в Ереван. С. Меликян помог Романосу Меликяну организовать Ереванскую музыкальную студию, которая в 1923 г. была переименована в Ереванскую Госконсерваторию, где и преподавал С. Меликян. Еще в 1916 г. в Тифлисе Меликян познакомился с великим армянским композитором А. Спендиаровым, с которым в дальнейшем продолжил дружбу и высоко ценил его творчество. Меликян скончался в Ереване, в 1933 г.

[14] *Ս. Մելիքյան. Հոդվածներ, հուշեր, նամակներ, փաստաթղթեր, էջ 38:*

SPIRIDON MELIKYAN'S ROLE IN THE ARMENIAN MUSICAL CULTURE

TIGRAN SARGSYAN

Summary

Spiridon Melikyan played a big role in the development of the Armenian musical culture of the 20th century, along with other prominent musicians and music theorists. He was born in Vagharshapat in 1880. He graduated from Etchmiatsin Gevorgyan Seminary in 1902, where he was also the student of great Komitas. Up to 1905 he taught at the same seminary and served as the assistant of Komitas's conductor. From 1904 to 1908 he studied in Berlin at the private conservatory of R. Schmidt, where he was taught by the same professors, who had earlier taught Komitas. It seemed that, as a musicologist, Spiridon Melikyan would follow in the footsteps of Komitas. However, after learning the music theory and the history of the musical culture at the conservatory, returning to his country he started exploring Armenian music of spiritual and folk origin. On some issues, he arrived at conclusions that directly contradicted those of Komitas. Nevertheless, Spiridon Melikyan treated his teacher with great respect. In 1930–1931 when he was the member of the Art Institute of the Academy of Sciences of the USSR and the rector of the Yerevan State Conservatory, he undertook the task of publishing the anthology of folk songs created by Komitas. Spiridon Melikyan was not only a respected composer himself, but he was also a successful music promoter and educator. In 1921, together with Romanos Melikyan, he organized the Tiflis Armenian Music Society, he also taught music at the Tiflis Nersisyan Gymnasium. In 1921 he was invited to work in Yerevan as a musician and an educator, where he started working at the Music Studio organized by Romanos Melikyan. From 1923, the Music Studio has been renamed the Yerevan State Conservatory. It was back in 1916 in Tiflis when Spiridon Melikyan met the great Armenian composer Alexander Spendiaryan for the first time. Spiridon Melikyan died in Yerevan, in 1933.